ՎԵՐԱՕԾՎԵՑ ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Կիրակի օրը, հոկտեմբերի 8-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու վերաօծման արարողությունը: Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի՝ ձեռքին ունենալով Ս. Ջորավարի մասունքն ամփոփող Աջը՝ ի օրհնություն և ի մխիթարություն բարեպաշտ ժողովրդի: Նախորդ օրն արդեն օծվել էին եկեղեցու սյուներն ու մկրտության ավազանը: Ձեռամբ Վեհափառ Հայրապետի վերաօծվեց եկեղեցու Ս. Սեղանը:

Ս. Գևորգ եկեղեցին եղել է հայ դպրության և գրչության կենտրոններից մեկը: Այն նաև հայկական ճարտարապետության յուրահատուկ կառույցներից է, որի ճարտարապետն է եղել Սահակ Հիզանեցին: Պատմությունը վկայում է, որ Ս. Գևորգ եկեղեցում ամփոփված է համաքրիստոնեական Սուրբ Գևորգ Ջորավարի մասունքը, որ 350 թվականին Հայաստան է բերել Ներսես Մեծ Կաթողիկոսը: Այսօր սրբի մասունքներից պահվում է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա տարեդարձի նախաշեմին Ս. Գևորգ եկեղեցու վերասրբագործումը հնարավոր դարձավ շնորհիվ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի: Ինչպես երախտագիտությամբ նշեց Վեհափառ Հայրապետը, Սրբազան Հայրը եկեղեցու վերաշինության գործին էր նվիրաբերել իր քահանայական ձեռնադրության 35-ամյակի առիթով ԱՄՆ-ում հանգանակված միջոցները:

Ս. Գևորգ եկեղեցու վերաօծմամբ վերստին կյանքի կկոչի նաև Մուղնու վանքը, որտեղ կրկին վերարթնություն է ապրելու վանական կյանքը:

«Անկախության բարի պտուղներն ենք քաղում մենք այս շրջանին մեր հավատացյալ բարեպաշտ ժողովրդի ձեռքերով: Սակայն ինչ արժեք պետք է ունենան այս ամենը, եթե դրանք միայն լինեն բարեկարգված ու բարեզարդված կառույցներ, եթե սրբազան տաճարների ներքո չպիտի լուսավորվեն մեր հոգին ու միտքը»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ հորդորելով հավատացյալ ժողովրդին մշտառաք աղոթքով կենդանի պահել հավատքի տաճարները:

Հավարտ վերաօծման արարողության, սրբագործված եկեղեցում մատուցվեց անդրանիկ Պատարագը: Պատարագիչն էր Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: